Ներկայացում արտահայտված կարծիքները հեղինակային են և կարող են չհամընկնել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետին:

The opinions expressed in this Report are those of the authors and do not necessarily represent the views of UNFPA.

The research was conducted within the framework of UNFPA "Combating gender-based violence in the South Caucasus" project funded by UNFPA and Norwegian government.

Հետազոտությունը իրականացվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Նորվեգիայի կառավարության աջակցությամբ իրականացվող «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում:

© «Լիզա» հիմնադրամ, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնությունը և ամուսնալուծությունը

Սոցիոլոգիական հետազոտության վերլուծություն

1. Խնդրի արդիականությունը.....3
2. Հետազոտության նպատակը.....6
3. Հետազոտության մեթոդները և թիրախային խումբը.....6
4. Հետազոտության արդյունքները և մեկնաբանությունները.....8
5. Հետազոտության ամփոփումից բխող հիմնական հետևությունները.....28
6. Հավելվածներ.....31
7. Հավելված 1. Հարցաթերթիկ.....31
8. Հավելված 2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված.....34

Երևան 2010

Հետազոտությունը պատրաստեցին՝

Հետազոտող խմբի ղեկավար՝

Մարիամ Օհանյան

Փորձագետներ՝

Լարա Ահարոնյան, ՀԿ ղեկավար
Մերի Խաչատրյան, իրավաբան
Արմինե Ավագյան, հոգեբան
Մարինե Մարտիրոսյան, հոգեբան
Ասյա Մկրտչյան, իրավաբան

Խմբագիր՝

Լիլիթ Հարությունյան

Աշխատակազմի անդամներ՝

Վիկտորյա Փոշոտյան
Արեգ Պետրոսյան

Ընտանեկան բռնությունը և ամուսնալուծությունը

Սոցիոլոգիական հետազոտության վերլուծություն

1. Խնդրի արդիականությունը

Ընտանեկան բռնության խնդիրը քիչ ուսումնասիրվածներից է: Այն դժվար ապացուցելի է և հղի՝ ծանր հետևանքներով: Աշխարհում ամեն տարի ընտանեկան բռնության հետևանքով մահանում են հազարավոր կանայք, որբանում են հազարավոր երեխաներ: Շատ երեխաներ մեծանում են հոգեկան խեղումներով, ինչն էլ հետագայում նրանց խանգարում է կազմել լիարժեք և առողջ ընտանիքներ:

Ընտանեկան բռնությունը մյուս ագրեսիվ գործողություններից տարբերվում է երեք հիմնական առանձնահատկություններով: Առաջինը, դա կատարվող բռնարարքների համակարգված բնույթն է, որն արտահայտվում է ժամանակի մեջ կրկնվող բռնության տարբեր ձևերին (ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական) վերաբերող միջադեպերի (պատտերների) տեսքով: Պատտերնի առկայությունը ընտանեկան բռնության կարևոր բնութագրիչն է, որը հնարավորություն է տալիս այն առանձնացնել ուղղակի կոնֆլիկտային իրավիճակներից:

Ընտանեկան բռնությունն ունի համակարգված բնույթ և բաղկացած է իրար հաջորդող, այսպես կոչված՝ բռնության փուլերից:

Ընտանեկան բռնության երկրորդ՝ սկզբունքային առանձնահատկությունը բռնության օբյեկտի և սուբյեկտի միջև առկա հարաբերությունների յուրահատկությունն է: Ի տարբերություն փողոցում՝ անծանոթի կողմից կատարվող հանցագործության, ընտանեկան բռնությունն իրականացվում է մտերիմ մարդկանց միջև՝ ամուսիններ, նախկին ամուսիններ, ծնողներ, երեխաներ, այլ ազգականներ, նշանվածներ, ամուսնանալու որոշում կայացրած անձինք:

Ընտանեկան բռնության երրորդ՝ սկզբունքային առանձնահատկությունը նրա հստակ արտահայտված գենդերային բնույթն է, որը հիմնականում ուղղված է կանանց դեմ: Ինչպես ցույց են տվել աշխարհի տարբեր երկրներում կատարված հետազոտությունները, բռնարարքներ իրականացնողները հիմնականում տղամարդիկ են: ԱՄՆ-ում և Կանադայում հրապարակված վիճակագրական տվյալների

համաձայն (հարցումը կատարվել է կանանց, տղամարդկանց շրջանում, հաշվի են առնվել դատարանների տեղեկատվությունը և ոստիկանական զեկույցները), ընտանեկան բռնության զոհերը՝ 90-96 % դեպքերում կանայք են: ԱՄՆ-ում իրավախախտումների ազգային վիճակագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ տղամարդիկ ընտանեկան բռնության զոհ են հանդիսանում ընդամենը դեպքերի 4%-ում: Այս տվյալները հաստատվում են նաև այլ հետազոտություններով: Շոտլանդիայում կատարված (մտերիմների նկատմամբ իրականացված հանցագործությունների հետ կապված) իրավախախտումների վիճակագրությունը ցույց է տալիս, որ բռնարարքների 94%-ի դեպքում տուժող կողմը կանայք են և միայն 3%-ի դեպքում են կանայք հանդիսանում բռնություն իրականացնողներ: Ֆիլադելֆիայում, բաժանված կանանց շրջանում իրականացված հարցման մասնակիցների 70%-ը խոստովանել է, որ ամուսնական կյանքում բռնության է ենթարկվել ամուսնու կողմից:

Ըստ 2009 թվականի իրականացված, Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ համապետական հետազոտության հարցվող կանանց գերակշիռ մեծամասնության կարծիքով՝ սեռական զուգընկերոջ կողմից ցանկացած գործողություն, որը հանգեցնում է ֆիզիկական վնասվածքի և հարկադրական սեռական հարաբերության, համարվում է բռնություն (համապատասխանաբար՝ 91.5% և 88.8%): Հարցվողների ավելի քան երեք քառորդը (78.5%) բռնություն են համարում կնոջը հրապարակավ նվաստացնելը: Կանանց ավելի փոքր տոկոսը բռնություն է համարում փողից զրկելը (67.6%) կամ կնոջն աշխատել արգելելը (68.4%) (դրանք իրականում, այսպես կոչված, տնտեսական բռնության տեսակներ են), կամ բանավոր սպառնալիքները (63.5%) (այդ թվում՝ բաժանվելու կամ վնասվածք հասցնելու սպառնալիքները): Հարցմանը մասնակցած կանանց միայն 52.7%-ն է բռնություն համարում բանավոր վիրավորանքը (այդ թվում՝ զրպարտելը, չարախոսելը և բղավելը):

Ինչպես վկայում են ամփոփված տվյալները, բռնության վերաբերյալ հարցվողների ընկալումը տարբերվում է ոչ միայն ըստ նրանց կենսագրական բնութագրիչների, այլև խնդրո առարկա «բռնության ձևի»: Այլ կերպ ասած՝ անհատական կենսագրական բնութագրիչների (ինչպես՝ տարիք, կրթություն, ամուսնական կարգավիճակ, բնակության վայր կամ երեխաների թիվ) հարաբերական

կշիռը տարբեր է՝ կախված այն բանից, թե ինչպիսի գործողություններն են որակվում որպես բռնություն: Օրինակ՝ տվյալները վկայում են, որ տարիքը տարբերակիչ գործոն չէ, երբ կինը որպես բռնություն է գնահատում սեռական զուգընկերոջ կողմից ցուցաբերված այն վարքագիծը, որը հանգեցրել է կնոջ ֆիզիկական վնասվածքի և, ավելի քիչ դեպքերում՝ հարկադրական սեռական հարաբերություն ունենալուն: Կանանց տարիքային տարբեր խմբերում վերոնշյալ գործողությունները համարվում են բռնություն՝ 89.0%-92.4% առաջինի դեպքում, և 83.4%-90.7%՝ երկրորդի դեպքում, եթե հաշվի չեն առնվում ամենաերիտասարդ ենթախմբից (15-19 տարեկան) ստացված տվյալները: Այս ենթախմբում վերոնշյալ գործողությունները բռնություն որակող կանանց մասնաբաժինը 7 տոկոսային կետով ավելի ցածր է գրանցված միջին արժեքից՝ առաջին դեպքում, և 9.5 տոկոսային կետով՝ երկրորդ դեպքում: Նույնը վերաբերում է նվաստացնող վերաբերմունքի նկատմամբ կանանց դիրքորոշմանը:

Տարիքը, որպես գործոն, նշանակություն է ստանում «տնտեսական բռնության» կիրառման դեպքում: Չնայած հարցվողների այն մասնաբաժինը, որոնք փողից զրկելը կամ կնոջն աշխատել արգելելը բռնություն են համարում, ավելի փոքր է, քան ֆիզիկական և սեռական բռնության դեպքում,այնուամենայնիվ, այս դեպքում օրինաչափությունն այլ է և տարիքը նշանակություն ունի: Սեռական զուգընկերոջ կողմից կնոջը փողից զրկելը բռնություն համարողների ամենացածր ցուցանիշը գրանցվել է 15-24 տարեկանների (64.0%), և ավելի ցածր՝ 20-24 տարեկանների ենթախմբերում (59.5%): Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 25-34 տարեկան ենթախմբում (73.4%), որը նվազում է 35-44 և 45-59 տարեկանների ենթախմբերում (համապատասխանաբար՝ 68.1% և 65.8%): Պատկերը նույնն է՝ կնոջն աշխատել արգելելը՝ որպես բռնություն համարողների դեպքում (տոկոսային ցուցանիշները շատ նման են նախորդ օրինակին):

Ամփոփելով, կարելի է նշել, որ ըստ 2009 թվականին Հայաստանում անցկացված կանանց նկատմամբ իրականացվող ընտանեկան բռնության վերաբերյալ համապետական հարցման, ֆիզիկական բռնությունը Հայաստանում կազմում է 8.9%, սեռական բռնությունը՝ 3.3%, հոգեբանական բռնությունը՝ 25% և ֆիզիկական կամ սեռական բռնությունը երբևէ զուգընկեր ունեցած կանանց կյանքի ընթացքում կազմում է 9.5%: (Համապետական հարցում

տվյալ խնդրիվերաբերյալ հրապարակված վիճակագրական տվյալները և հետազոտությունները:

4. Հետազոտության արդյունքները և մեկնաբանությունները

Ընտանեկան բռնության և ապահարզանի նկատմամբ մարդկաց վերաբերմունքը պարզաբանելու համար կատարվել է փորձնական հետազոտություն, որի շրջանակներում հարցմանը մասնակցել են 20-70 տարեկան 79 կին և 21 տղամարդ: Պատրաստվել են հարցաթերթիկներ, որտեղ հարցվողը պետք է նշեր իր սեռը, տարիքը, կրթությունը, ընտանեկան դրությունը: Հարցմանը մասնակցողները պետք է պատասխանեին նաև հետևյալ հարցերին.

Ինչպե՞ս եք վերաբերվում ընտանեկան բռնությանը:

Ինչպե՞ս եք վերաբերվում ամուսնալուծությանը:

Կա՞ն, արդյոք, Ձեր ծանոթների շրջանում մարդիկ, որոնք ենթարկվել են ընտանեկան բռնության և ինչպե՞ս են նրանք լուծել այդ խնդիրը:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հասարակությունը անթույլատրելի է համարում ընտանեկան բռնությունը: Մասնակիցներից միայն երկուսը պատասխանեցին, որ ընտանեկան բռնությունը թույլատրելի է, երկու հոգի էլ ձեռնպահ մնացին: Հարցվածների 32% -ը կարծում է, որ ընտանեկան բռնությունն այն է, երբ ամուսինը ծեծում է կնոջը, 31% - ը, երբ ամուսինը սահմանափակում է կնոջ ազատությունը, իսկ մեծամասնությունը՝ 35% - ը, այդ երկու դրսևորումներն էլ դիտարկում է որպես ընտանեկան բռնություն:

Հասարակությունում բաժանումների նկատմամբ վերաբերմունքը բավականին հանդուրժողական է՝ հարցման մասնակիցների միայն 6% - ն է նշել, որ բաժանումն անթույլատրելի է, 60% - ը նշել է, որ դա՝ ամուսինների անձնական գործն է, 34% - ը նշել է, որ որոշ դեպքերում բաժանումն անխուսափելի է:

Պարզվեց, որ հարցմանը մասնակիցների 91% - ի շրջապատում կան բաժանված մարդիկ, և միայն 9% -ը այդպիսի ծանոթներ չունի: Այս արդյունքները ցույց են տալիս, որ բաժանությունը բավականին տարածված երևույթ է և արդեն հիմնականում չի առաջացնում բացասական արձագանքներ:

«Ի՞նչն է հանդիսանում ընտանեկան բռնության պատճառ» հարցին, հարցվողների 28% - ը պատասխանել է՝ ամուսնու վատ դաստիարակությունը, 27% - ը՝ ամուսնու հիվանդագին խանդը, 14% - ը՝ ամուսնու անպատժելիությունը, 14% - ը կնոջ պահվածքը, 4% - ը՝ ավանդույթները, այդպես ընդունված է, 4% - ը՝ ամուսնու թուլությունը, անվստահությունը, 2% - ը՝ ամուսնու ալկոհոլային թմրադեղային/կախվածությունը:

«Նշված պատճառներից որո՞նք են բավարար ամուսնալուծության համար» հարցին տրված պատասխաններից առաջին տեղում «ամուսինների դավաճանությունն» է:

1. Ամուսնու դավաճանությունը – 27%
2. Բնավորությունների անհամատեղելիությունը – 20,2%
3. Ամուսինը ծեծում է կնոջը – 19,4%
4. Սեռական անհամապատասխանությունը – 12,5%
5. Համատեղ երեխա ունենալու անկարողությունը – 8,7%
6. Ամուսինը չի կարողանում ապահովել ընտանիքի բարեկեցությունը - 5,7%
7. Մինչ ամուսնությունը կնոջ կույս չլինելը – 4,6%
8. Տղայի ծնողները հարսին չեն ընդունում – 1,9%

«Նշված պատճառներից որո՞նք են բավարար ամուսնալուծման համար» և «ՈՒնե՞ք, արդյոք, ծանոթներ, որոնք բաժանված են, եթե այո, ապա՝ ի՞նչն էր պատճառը» հարցադրումների համեմատական արդյունքների աղյուսակը.



«Ունե՞ք, արդյոք, ծանոթներ, որոնք բաժանված են, եթե այո, ապա՝ ի՞նչն էր պատճառը» հարցին պատասխանելիս, չնայած, որ նախորդ հարցի առաջին երեք գնահատականները պահպանվում են, փոխվում է տոկոսային հարաբերությունը՝ առաջին տեղն ավելի մեծ տոկոսով գրավում է «ամուսնու դավաճանությունը» պատասխանը, փոքրանում են «բնավորությունների անհամատեղելիություն» և «ամուսինը ծեծում է կնոջը» պատասխանների տոկոսները, չորրորդ տեղում է հայտնվում՝ «ամուսինը չի կարողանում ապահովել ընտանիքի բարեկեցությունը» պատասխանը, ավելանում են «համատեղ երեխա ունենալու անկարողությունը» և «տղայի ծնողները հարսին չեն ընդունում» պատասխանների տոկոսները: Այս արդյունքները ցույց են տալիս, որ իրականում ընտանիքի քայքայման գործընթացում լուրջ ազդեցություն ունեն նաև ֆինանսական խնդիրները, համատեղ երեխաներ ունենալու անկարողությունը, կնոջ և ամուսնու ազգականների միջև առաջացող ընտանեկան կոնֆլիկտները:

1. Ամուսնու դավաճանությունը – 28.2%
2. Բնավորությունների անհամատեղելիությունը – 19.5%
3. Ամուսինը ծեծում է կնոջը – 15%
4. Ամուսինը չի կարողանում ապահովել ընտանիքի բարեկեցությունը – 9.6%
5. Համատեղ երեխա ունենալու անկարողությունը – 9.1%
6. Սեռական անհամապատասխանությունը – 8.2%
7. Տղայի ծնողները հարսին չեն ընդունում – 6.8%
8. Մինչ ամուսնությունը կնոջ կույս չլինելը – 3.2%

«Կա՞ն, արդյոք, Ձեր շրջապատում կանայք, որոնք ենթարկվում են ընտանեկան բռնության» հարցին, պատասխանել է «այո» հարցվածների 52% - ը, հարցմանը մասնակցող կանանց միայն 9% - ն է խոստովանել, որ ենթարկվում է ընտանեկան բռնության, որոնցից միայն 3 – ը համաձայնվեցին հարցազրույց տալ:

Այս արդյունքները համընկնում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից կատարված հետազոտության արդյունքների հետ[1]:

1 - Համապետական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ, հարցումը իրականացվել է ՍԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում

Հնարավոր է, որ հասարակությունում ընտանեկան բռնության ենթարկվողների քանակն ավելի բարձր է, սակայն կանանց միայն 9% - ն է գիտակցում, որ ապրում է ընտանեկան բռնության պայմաններում:

«Կա՞ն, արդյոք, Ձեր շրջապատում կանայք, որոնք ենթարկվում են ընտանեկան բռնության, եթե «այո», ապա ինչպե՞ս են նրանք լուծում այդ խնդիրը» հարցին հարցվողների 35% - ը պատասխանել է, որ իրենց ծանոթները դիմանում են, քանի որ այլ ելք չունեն, 14% - ը՝ փորձում է բաժանվել:

Ինչպես տեսնում ենք, բռնության ենթարկվող կանանց մեծամասնությունը, այնուամենայնիվ, գերադասում է դիմանալ: Որպեսզի հասկանանք այդպիսի պահվածքի պատճառը, մենք իրականացրեցինք փորձագիտական հարցազրույցներ՝ փաստաբանների, իրավաբանների, հոգեբանների հետ, ինչպես նաև խորքային հարցազրույցներ՝ ընտանեկան բռնության զոհերի հետ:

Հայ հասարակությունում ավանդաբար շատ բարձր է գնահատվում ընտանիքի դերը: Շատ կանանց համար ընտանիք կազմելը և երեխաների դաստիարակությունը կյանքի հիմնական իմաստն է: Դա է պատճառը, որ կինը ցանկացած գնով ձգտում է պահպանել ընտանիքը, և միայն իր կյանքին վտանգ սպառնալու դեպքում է սկսում մտածել ապահարզանի մասին: Շատ հաճախ կինը հիասթափվում է ամուսնության առաջին իսկ տարիներին, սակայն հանգամանքների բերումով, տուրք տալով հասարակական կարծիքին, շարունակում է կրել ստորացումները և աստիճանաբար հարմարվում է իր վիճակին:

Հատվածներ հարցազրույցներից

«Ամուսնությունից հետո կյանքս վերածվեց քաոսի: Առաջին գիշերից հետո ես արդեն ցանկացա գնալ տուն: Նա չափազանց կոպիտ էր: Ես հիասթափվեցի, առանց այն էլ՝ սիրելով չեմ ամուսնացել: Ինձ համար տհաճ էր գտնվել այդ միջավայրում, սակայն կտրուկ փոփոխությունների ես դեռ պատրաստ չէի»:

«Ինձ ասում է՝ այս շորը չհագնես, այնտեղ չգնաս: Աշխատանք գտնելու դեպքում վեճ կառաջանա: Եթե աշխատում ես, ուրեմն՝ անբարոյական ես: Ես շատ եմ ուզում նրանից

ֆինանսապես անկախանալ»:

Բռնության զոհ կարող է դառնալ ցանկացած կին՝ անկախ իր ծագումից, սոցիալական կարգավիճակից, կրթությունից: Սակայն կան որոշակի առանձնահատկություններ. ընտանեկան բռնության զոհ դարձած շատ կանայք ամուսնական կյանք են մտնում արդեն զոհի արմատավորված նախադրյալներով, ցածր ինքնագնահատականով: Նրանց մի մասը, մինչ այդ, ունեցել է պրոբլեմատիկ ընտանեկան հարաբերությունների փորձը: Սովորաբար, աղջկա ընտանեկան դաստիարակությունն իր մեջ ներառում է ենթարկվողականության, հարմարվողականության, կատարող լինելու խիստ պահանջներ: Մանկուց նրան տրամադրում են, որ նա պետք է գնա այլ տուն, որտեղից վերադարձ չկա, քանի որ դա անպատվություն է, և այդ պատճառով նա պետք է դիմանա ու ենթարկվի: Աղջիկն արդեն մանկությունից գիտի, որ ինքն այդ տանը «ժամանակավոր բնակիչ» է, և նրա կյանքի գլխավոր նպատակը հաջող ամուսնությունն է:

Հատվածներ հարցազրույցներից

«Հայրս բռնանում էր մորս վրա: Մայրս իր հերթին բռնանում էր թույլ օղակի՝ իր աղջիկների վրա»:

«Ծնվել, մեծացել եմ գյուղում: Մանկությունս շատ դժվար է անցել՝ միշտ վեճերի ու կռիվների մեջ. անհաշտություն կար ծնողներիս միջև՝ հայրս ծեծում էր մորս:

Ամուսնացել եմ 18 տարեկանում: Ծնողներս պատճառ դարձան, հիմնականում՝ մայրս: Ես ներքուստ չէի ուզում, հարկադրված ամուսնացա»:

Հաճախ, կանայք, որոնք ապրել են ընտանիքում, ուր առկա էր ընտանեկան բռնությունը, և միևնույն ժամանակ եղել են իրենց հայրերի սիրելիները, այդ իրավիճակի համար մեղադրում են իրենց մայրերին: Եվ համարելով, որ իրենք ավելի լավ գիտեն, թե ինչպես վարվել տղամարդու հետ, ամուսնանում են «բռնացողի» հետ (այդ ամենը կատարվում է ենթագիտակցական մակարդակով): Իսկ երբ արդեն նրանց տեսությունը չի արդարացվում և չկա մեկը, որի հետ կարելի է

կիսվել, կանայք սկսում են փնտրել նոր արդարացումներ և գոյատևման հնարքներ:

Արդեն ժամադրությունների ժամանակ արտահայտվում են ապագա ամուսնու բնավորության գծերը՝ նա սկսում է մշտապես վերահսկել ապագա կնոջ վարքը, արգելում է որոշակի բաներ, սահմանափակում է նրա ազատությունը, սակայն շատ աղջիկների թվում է, որ երիտասարդի չափից ավելի «հոգատարությունը» նրա սիրո ապացույցն է:

Ընտանեկան բռնությունն ունի տարբեր դրսևորումներ և սահմանափակումներ՝ դրամի ծախսի, տեղաշարժման և հաղորդակցության ազատության, աշխատանքի հնարավորության: Կնոջ նկատմամբ վերահսկողությունը հասցնում է նրան, որ նա աստիճանաբար զրկվում է սոցիալական կապերից, գումար վաստակելու հնարավորությունից, որի հետևանքով մեծանում է նրա կախվածությունն իր ամուսնուց, փոքրանում նրան դիմագրավելու կարողությունը:

Հատված հարցազրույցից

«15 տարի պարել եմ: Դպրոցն ավարտեցի 17 տարեկանում եւ ընդունվեցի Պարի պետական համույթ, բայց նա չթողեց, որ պարեմ: Պարողների մասին ասում էր, որ բոլորը անբարոյական են, այն էլ՝ Պարի պետականում՝ կգնաս շրջագայությունների, ու՞մ ամուսինը թույլ կտա, որ իր կինը պարի օտար տեղում: Իրեն թվում է, թե հայ կինը տանը պիտի մնա, երեխա պահի և չպետք է աշխատի:

Դեռ ամուսնացած չէինք, բայց ես նրան լսեցի ու թողեցի պարը: Սրիպված ընդունվեցի Պոլիտեխնիկ, որ իր հետ ավարտեմ: Միասին էինք ինստիտուտ գնում: Երբ երեխաս ծնվեց, դիպլոմս էի պաշտպանում: Ամեն ինչում լսել եմ նրան և ենթարկվել:

Իմ օրինակով ասում եմ, որ կինը չպետք է ամեն ինչ անի տղամարդու ցանկությամբ»:

Հարցազրույցներին մասնակցած կանայք հասարակության տարբեր շերտերից էին, նրանց մեջ կային ինչպես բարձրագույն, այնպես էլ միջնակարգ կրթությամբ կանայք, ինչպես քաղաքից, այնպես

էլ՝ գյուղից: Մի մասը երկար հանդիպել էր և ամուսնացել սիրելով, մյուսներին՝ ծանոթացրել են բարեկամները: Կանանց մի մասին համատեղ կյանքի առաջին իսկ օրերին սպասում էր խորագույն հիասթափություն, մյուսների ընտանեկան կյանքում խնդիրներ սկսեցին առաջանալ մի քանի տարվա երջանիկ համատեղ կյանքից հետո: Հետաքրքրական է, որ այն կանայք, որոնք բաժանվել են, նշում են իրենց ամուսնու թերությունները, իսկ կանայք, որոնք շարունակում են ապրել բռնացողի հետ, մշտապես գովում են ամուսնուն, նրա տղամարդկային հատկությունները, բռնությունը դիտում են որպես նրա համար ոչ բնութագրական վարքագիծ, որում մեղավոր են ազգականները, ընկերները, հանգամանքները...

Հատվածներ հարցազրույցներից

«36 տարեկան եմ: Կրթությունս՝ բարձրագույն: Երկրորդ կարգի հաշմանդամ եմ: Երրորդ անգամ վիրահատվելիս, բժիշկն ասաց, որ հարվածից է կիսդրան առաջացել: Ամուսինս խոստացավ, որ էլ չի խմի: Նա չէր աշխատում, երեխաները սոված էին մնում, սպասում էր ծնողների օգնությանը, ներվային համակարգը լրիվ խախտվեց, 3 տարի անգործ էր, հիմա՝ աշխատում է, բայց կարող է խմել նաև ուրախությունից: Շատ բան եմ տարել՝ ծեծվել եմ, գիշերը հարբած վիճակում քնի մեջ ահավոր ձայներ է հանել, խփել: Սիրուհի էլ է պահել՝ ինձ սենյակում փակելով՝ հեռախոսով խոսում էր սիրուհու հետ: Բայց ես մտածում էի, որ ինքը 4 տարի ինձ սիրելով, չի կարող այդպես վարվել: Այդպիսի լավ մարդ, բայց շրջապատը, ընկերները, ռեստորանները, խմիչքը կործանեցին նրան:

Երեխաներս շատ են սիրում իրեն, ինքը լավ մարդ է, լավ հայր: Հոգեբանի մոտ գալով հուսով եմ, որ ինձ լավ կզգամ, խորհուրդներ կտան, լավ կլինի: Հիմա այնքան լարված եմ, որ նույնիսկ երեխաների հետ չեմ կարողանում լավ հարաբերություններ ստեղծել: Դեպրեսիայի մեջ եմ»:

«Ամուսնացել եմ 23 տարեկանում: Նոր էի ավարտել ինստիտուտը: Ամուսինս 38 տարեկան էր: Համատեղ կյանքը սկզբում լավ էր: Իսկ հետո աստիճանաբար, 4-5 տարի անց, ինչ-ինչ պատճառներով, ի հայտ եկան անախորժ երևույթներ: Բայց դրանց բացատրությունը ես ամուսնուս մեջ չեմ փնտրում ու չեմ գտել»:

Կանայք, որոնք ունեն հարբեցող ամուսիններ՝ նրանց ներկայությամբ անառարկելիորեն ենթարկվում են՝ չզայրացնելու և ծեծկռտուք չառաջացնելու համար:

Հատված հարցազրույցից

«Մի անգամ, երբ մայրս Լոռուց հյուր էր եկել մեր տուն, ամուսինս հարբած տուն եկավ: Փոքր տղաս 5 տարեկան էր: Մայրս անտեղյակ էր մեր տան խնդիրներին: Նստած էինք՝ մտավ: Ինքն անմեղ էր, խմիչքն էր մեղավոր, խմիչքն էր խոսում իր մեջ, իհարկե մայրիկիս շատ-շատ էր սիրում և հարգում: Ես զգացի, որ ագրեսիվորեն է տրամադրված: Այդ ժամանակ միացրեցի պարեղանակ: Տղաս զարմացավ, բայց քանի որ իմ հնարամտություններին ծանոթ էր, սկսեց ինձ հետ պարել: Երևի թե ուրախությունը այդ պահին ամուսնուս էլ պատեց ու ծափ տալով՝ միացավ մեզ: Մայրս զարմացած, երկու ձեռքը ծնկներին խփեց ու ասաց՝ «Վոյ աղջիկս շշացելա»: Ես ծիծաղեցի, ու հետո մայրիկիս բացատրեցի, որ նման միջոցների եմ դիմում՝ լարվածությունը թուլացնելու եւ երեխաներին ապահովագրելու նպատակով»:

Սակայն, երեխաների վերաբերմունքը մոր նկատմամբ լինում է ոչ միանշանակ: Չնայած այն հանգամանքին, որ կինն ամեն կերպ ձգտում է պաշտպանել երեխաներին հարբած հոր հարձակումներից՝ գերադասելով «կրակը» վերցնել իր վրա, երեխաները, որպես կանոն, ընդօրինակում են հոր վերաբերմունքը և հաճախ իրենց մորը չեն հարգում:

Հատված հարցազրույցից

«Երեխաները նրան հարբած տեսնելով՝ հարցնում էին, թե՝ ինչու եմ նրա հետ ապրում: Հատկապես՝ մեծը: Բայց սթափ

վիճակում գումար է պալիս, կամ հարցնում՝ թե ի՞նչ կցանկանային, ու երևիանները անմիջապես մոռանում են վայրը: Միր շատ լավ մարդ է: Ինձանից ապասում է, որ միշտ «ջանով» խոսեմ, բայց երբ տեսնում եմ հարբած է՝ նյարդայնանում եմ»:

Կինը, որն ապրում է մշտական ընտանեկան բռնության պայմաններում, արդարացնում է իր վիճակը պատճառաբանելով, որ ամուսինն առանց իրեն կկորչի և, որ ինքը հանդիսանում է նրա միակ փրկիչը:

Հատվածներ հարցազրույցներից

«Ես մտածել եմ, թե ինչու նա ինձ չի գրանցել: Բայց հիմա առանձին տարածքի մասին չեմ մտածում, քանի որ նա առանց ինձ չի կարող. եթե մի օր չեմ խոսում՝ նեղվում է, գործերը ձախողվում են: Շատ է ինձ վիրավորել, բայց դա եղել է խմիչքի ազդեցությամբ»:

«Ես նորից, նույնիսկ այդքանի միջով անցնելով, այդքանը տեսնելով, իմ արածը ճիշտ եմ համարում, որովհետև գիտեի, որ նա անպայման կհայտնվեր փողոցում, եթե լքեի նրան, ու մենք բաժանվեինք: Ճիշտ է, տառապել ենք բոլորս, և շատ բաներից զրկվել ենք, բայց այն, որ չեմ բաժանվել ու նա որպես հարբեցող՝ չի հայտնվել փողոցում ճիշտ եմ համարում»:

Այնպես է ստացվել, որ շատ կանայք տառապում են այն պատճառով, որ ամուսինը խմում է, և թվում է՝ հենց ալկոհոլային կախվածությունն է նրա ագրեսիայի պատճառը: Իսկապես, ալկոհոլի չարաշահումը թուլացնում է անձի սեփական վարքը կարգավորելու կարողությունը: Սակայն բռնարարքներ իրականացնողների մեջ կան «առողջ կյանք» վարող տղամարդիկ, որոնք չեն ծխում և չեն խմում: Ոմանք, նույնիսկ բուժվելով հարբեցողությունից, շարունակում են դաժան և ագրեսիվ պահվածք դրսևորել մտերիմների նկատմամբ:

Հարբեցողությունը կամ ոգելից խմիչքներ ընդունելը չեն կարող բռնության արդարացում հանդիսանալ: Այդ երևույթն, ավելի շուտ, բռնության կատալիզատոր է կամ ագրեսիվ գործողություններ

իրականացնելու յուրահատուկ թողտվության անցաքուղթ:

1975 և 1988 թվականներին իրականացվել են ոգելից խմիչքների գործածությամբ՝ ագրեսիվության մակարդակի վրա ազդեցության պարզաբանման փորձեր: ՈՒսանողների երկու խմբերի տրվեցին խմիչքներ: Առաջին խմբի խմիչքը բաղկացած էր օղուց և տոնիկից, սակայն ուսանողներին հավաստիացնում էին, որ նրանք խմում են միայն տոնիկ: Երկրորդ խմբի անդամները խմում էին ոչ-ալկոհոլային ըմպելիք (այնտեղ միայն տոնիկ էր), սակայն նրանց ասում էին, որ դա օղի և տոնիկ է: Երբ հետազոտողներն իրականացրեցին ագրեսիվության թեստը, հայտնաբերվեց, որ ավելի ագրեսիվ են երկրորդ խմբի ուսանողները: Ներշնչանքը, որ իրենք ալկոհոլ են օգտագործել (չնայած, որ իրենք ոչ-ալկոհոլային ըմպելիք էին խմել) նրանց պահվածքին ագրեսիվություն էր հաղորդել: Փորձի արդյունքներն ապացուցեցին, որ ալկոհոլը՝ չհանդիսանալով բռնության պատճառ, տալիս է այն իրականացնելու իրավունք: Իսկ դա նշանակում է, որ ընտանեկան բռնության պատճառն այլ է:

Հայ հասարակության մեջ կանայք կարգավիճակ են ստանում և արժևորվում են միայն ընտանիք կազմելուց և երեխա ունենալուց հետո: Կանայք, որոնք չունեն կնոջ և մոր կարգավիճակ, հասարակությունում դառնում են արհամարհված անձինք, լավագույն դեպքում՝ նրանց կարեկցում են: Սա նշանակում է, որ կինը, որը շրջապատում ցանկանում է հաջողակ երևալ, պետք է ցանկացած գնով պահպանի ամուսնությունը: Արդյունքում՝ նա պատրաստ է դիմանալ ամեն ինչի՝ դավաճանության, ծեծի, ստորացման, միայն թե՝ չբաժանվի: Այս իրավիճակը կարելի է անվանել «սիրո խեղդող գրկախառնություն»: Սակայն, քանի որ մարդուն անհրաժեշտ է թեև ոչ իրական, այլ գոնե թվացյալ ազատության զգացում, տղամարդու մոտ, որն ապրում է ամեն ինչ ներող, համբերատար, «իդեալական» կնոջ հետ, սկսում է մեղքի զգացողություն առաջանալ, որի հետևանքով առաջացած ագրեսիան նա սկսում է արտահայտել հարբեցողության «քողի» տակ և կանգնում է ինքնակործանման ճանապարհին:

Փորձնական հետազոտության հարցման մասնակիցները որպես բաժանման պատճառ նշել էին ամուսնու դավաճանությունը: Սակայն իրականում շատ կանայք այդ փաստը բավարար հիմք չեն համարում բաժանման համար: Ավելին, մտածելուց հետո նրանք գալիս են այն եզրահանգման, որ ամուսնու դավաճանությունը լուրջ տարվածություն

չէ և հրաժարվում են բաժանվելուց: Ո՞րն է այդ ներողամտության պատճառը: Պատճառը՝ կարգավիճակը, շրջապատի հարգանքը կորցնելու վախն է, կամ՝ այլ կերպ ասած՝ ընտանիքը կնոջ գոյատևման միակ հնարավոր ձևն է:

Հատված հարցազրույցից

«Սկզբում չէի հասկանում, բայց հետո զգացի, որ փարվել է ուրիշ կնոջով: Մտածեցի, որ երևի սխալը ինձնից է գալիս, այլ ոչ թե, այն գաղափարից որ գոյություն ունեն լավ ու վատ կանայք: Մտածեցի, որ այդ դեպքում կա 2 ընտրություն՝ կամ մնում ես ամուր ընտանիքիդ կառչած, պահում ես ընտանիքդ, կամ բաժանվում ես, որովհետև ես արդեն սրտոյգ զգացել էի, որ դրսում կա երկրորդ անձնավորություն: Մտածելով ու, երևի թե, իրեն սիրելով ու խղճալով, որոշեցի չբաժանվել, որովհետև դրանից ինքն էլ կտուժի: Եթե այդ հողի վրա բաժանվեմ ու առանձնանամ երեք երեխաներիս հետ, խղճալի վիճակում կթողնեմ նրան, ու որոշեցի շարունակել ապրել նրա հետ:

Ես ընդամենը մի սխալ գործեցի, ասելով, որ կարող եմ պահել և երեխաներին, և իրեն, քանի որ նա անգործունակ էր դարձել արդեն:

Նա չէր արդարանում, պարզապես ակնարկեց, որ այլևս դա չի կրկնվի: Երևի թե դրանից հետո իրոք ոչինչ չկրկնվեց, բայց շարունակեց խմել: Ինչն էր պատճառը, չգիտեմ: Չեմ կարող ասել, որ դա ինչ որ մեծ սեր էր իր համար եւ այդ սիրուց բաժանվելը խմիչքի չարաշահման պատճառ դարձավ: Ես դրան չեմ վերագրում: Պարզապես երևի ես պիտի այլ կերպ վարվեի՝ ավելի մեծահոգի գտնվեի, մինչդեռ հաճախ էի հիշեցնում իր դավաճանությունը: Երևի բարկացնում էի նրան»:

Երբեմն ամուսինը դառնում է կնոջ հիմնական բիզնեսը:

Հատված հարցազրույցից

«Հիմա ես էլ եմ հասարակության բարձր խավի հետ, իմ ամուսինն է տալիս դա, ինձ ավելին պետք չէ:

- Սրացվում է, որ ձեր ամուսինը ձեր բիզնեսն է:
- Այո: Ընտանիքը բիզնես է միանշանակ:
- Այսինքն, դուք ամուսնուն ձնշելո՞վ եք արդյունքի հասնում:
- Ուղղություն տալով: Երբեմն իրեն զայրացնում եմ, երեսով տալով արածս, բայց ոչ մի տղամարդու դա հաճելի չէ, նրանք ուզում են լինել հիմնադիրները: Ինքն ու տղաներս մեղավոր չեն, որ ես եմ ուղղություն տալիս, իրենք, ազնիվ խոսք, շատ տաղանդավոր մարդիկ են: Ես էլ մեղավոր չեմ, որ նախաձեռնող եմ, իսկ իրենք՝ կատարող: Սակայն առանց իրենց ոչինչ չեմ կարող անել»:

Ինչպես հոգեբանները, այնպես էլ հարցազրույցների մասնակիցները պնդում են, որ հաճախ ընտանեկան բռնության պատճառ են հանդիսանում տնտեսական ճգնաժամը, գործազրկությունը, աշխատանքում մարդու վրա գործադրված ճնշումը, երբ տղամարդը հասկանում է, որ ինքն ի վիճակի չէ կատարել «ընտանիքի կերակրողի» իր ֆունկցիան:

Հատված՝ հոգեբանի հետ իրականացված փորձագիտական հարցազրույցից

«Բռնությունն ուժեղանում է նաև աշխատավայրերում: Այժմ գործատուները փորձում են քիչ գումար վճարելով, ավելի շատ պարտականություններ բարդել աշխատողների վրա: Բնականաբար, այդպիսի միջավայրից դուրս վերադառնալով, նրանք իրենց ողջ դժգոհությունը թափում են ընտանիքի անդամների վրա: Սովորաբար, ընտանեկան բռնությունն այդպես էլ իրականանում է, երբ բացասականը թափվում է ոչ թե մեղավորի, այլ թույլ օղակի վրա: Որքան շատ են աշխատանքային և ընտանիքի ֆինանսական խնդիրները, այնքան շատ են կոնֆլիկտային իրավիճակները, որոնք կարող են վերածվել ընտանեկան բռնության:

Ընտանեկան բռնությունը երկրի հասարակական ու քաղաքական գործընթացների հետ ուղղակիորեն կապված չէ: Սակայն ճգնաժամը, գործազրկությունը ընտանիքում լարված մթնոլորտ կարող են առաջացնել»:

Հատված հարցազրույցից

«Երբ տղամարդը բարդույթավորված է, կամ ինչ-ինչ պատճառներով չի կարողանում ինքն իրեն դրսևորել, այդ ամբողջ բացասական էներգիան դանն է գործածում՝ բռնանալով դանեցիների վրա: Այն պարզապես արտահայտվելու միջոց է հանդիսանում»:

Ակնհայտ է, որ ընտանեկան բռնությունն ունի շարունակական բնույթ՝ ոչ միայն կրկնվելու իմաստով, այլև՝ նրանով, որ ինչ որ պահի կոնֆլիկտի մասնակիցները՝ բռնացողը և զոհը տեղերով փոխվում են: Հարսը սկեսուր է դառնում: Ամուսինը ծերանում է, դառնում է անզոր, մինչդեռ կինը մնում է տանտիկինը և տարիների հետ առավել հաստատում իր իշխանությունը:

Հատվածներ հարցազրույցներից

«Ի վերջո տղամարդիկ էլ 50-ից հետո խելոքանում են, խելքի են գալիս, ընտանիքը սկսում է ուրիշ տեսակ լինել: Հետո շատ դեպքերում, մեծ տարիքում կանայք սկսում են նույն ձևով բռնանալ տղամարդկանց վրա: Սրա վառ ապացույց ունեմ՝ մի ընկեր ակնաբույժ, ասում է, որ երբ երիտասարդ ամուսիններ են գալիս, ամուսինը գոռգոռում է կնոջ վրա՝ նստիր, վեր կաց: Իսկ երբ տարեց ամուսիններ են գալիս՝ կինն է գոռգոռում: Հաճախ ես երիտասարդներին ասում եմ՝ կնոջդ հանգիստ թող, մեծերին էլ ասում եմ՝ լավ, այդ խեղճ մարդուց ինչ եք ուզում: Այսինքն՝ կատարվում է փոխատեղում զոհի և բռնացողի միջև»:

«Եղել են պահեր, որ ինքը ինքնուրույն չի կարողացել գդալը բարձրացնել, ես եմ կերակրել: Երբ խմիչքը արդեն իր գործն արել էր, ձեռքերը թուլացան, օրգանիզմը թուլացավ ու ես իմ ձեռքով կերակրել եմ, ինչպես կկերակրեն երեխային:

«Երբեմն գիշերները, մինչև 2-3 նստած՝ կարում էի: Նա կարող էր գիշերներ շարունակ լուռ նստել. ես կարում էի, նա լուռ նստում էր կողքիս: Երբ հարց էի տալիս, թե ինչու չի գնում քնելու, ասում, էր, որ քունը չի գալիս: Այդ պահերին զգում էի, թե ինչքան է զոջացել և գիշերները իմ կողքին նստելը՝ իր օգնությունն էր իմ աշխատանքին: Դրանով ամեն ինչ ասված էր, բայց արդեն 68-69 տարեկան էր»:

Շատ կանայք խոստովանում են, որ ընտանեկան բռնության պատճառը կնոջ՝ ընտանիքում չափից ավելի նվիրվածությունն է, որը բերում է սեփական «ես» - ի կորստի:

Հատված հարցազրույցից

«Հիմնական պայմաններից մեկն է կնոջ ավելորդ նվիրվածությունը: Ի վերջո ոչ մի մարդ շատ հավատարիմ շանը չի սիրում, որոհետև անընդհատ ոտքերին քսվելով՝ ջղայնացնում է: Այդպիսի հոգեբանություն էլ կա»:

Հատված՝ իրավաբանի հետ անցկացված փորձագիտական հարցազրույցից

«Կանայք պետք է փորձեն կախման մեջ չգտնվել տղամարդկանցից, ինքնահաստատվեն: Սակայն Հայաստանում շատերը մտածում են, ամուսնացել եմ, չեմ աշխատի, թող ամուսինս պահի: Կամ՝ ամուսնանամ հարուստ մեկի հետ, գնամ արտասահման: Դա առաջին սխալն է, որ հենվում են տղամարդու վրա: Մեր ուսանող աղջիկներից եթե հարցնեք, 10-ից 8-ը կասեն, իհարկե կուզենային, որ ամուսինը իրենց ապահովի: Հետո, երբ ամուսնանում են, ապա տեսնում են, որ այդպես չէ:

Ես ունեի մի այդպիսի 19 տարեկան աղջիկ, որն ամուսնացավ հունվարի 21-ին ու հունիսի 10-ին եկավ մոտ հետ: Ասաց, որ որոշել է ամուսնալուծվել: Բայց ՀԱԳՍ-ում չէին գրանցվել և ուզում էին իմանալ, թե ինչ կարգով կարող են ամուսնալուծվել: Այսինքն, 6 ամիս հետո այդ աղջիկը որոշել էր ամուսնալուծվել: Բայց եթե դուք այդ աղջկա հարսանյաց հանդեսի տեսագրությունը դիտեիք, ապա կհասկանայիք, որ նա ամուսնացել է գումարի եւ ունեցվածքի համար: Իսկ ամուսինը գիշերային կյանքով էր ապրում: Ես մորը հարցրի՝ դուք չէի՞ք նկատել, որ այս ամուսնությունը անհամատեղելի է, ստ-

ցիալական դիրքով տարբեր այդ մարդը տարիքով մեծ է, շատփոր ունի ու չի բացառվում, որ հետաքրքրություններ կունենա դրսում, դուք ձեր աղջկան չէի՞ք բացատրել: Ասում է՝ ոչ, և մտածել է, որ եթե նա հարուստ է, ապա աղջկան կապահովի տնով, ամառանոցով և այլ բաներով: Բայց հետո այդ աղջիկը հասկացել էր, որ նա միայն իր է այդ տան մեջ: Միայն առավոտյան էր տեսնում ամուսնուն, կամ՝ նա օրերով տուն չէր գալիս: Ամուսնալուծության մասին խոսք չէր կարող լինել, իհարկե, ուղղակի՝ փասատացի հեռացում տնից և վերջ:

Ես 8 տարի դասախոսել եմ, դասամիջոցներին և լսարաններում ուսանողներին ուշադրություն դարձնելով՝ տեսել եմ, թե ինչ մակարդակ և ինչ կարգի խոսակցություններ են վարում: Նման մտածելակերպ ունեցողները անհեռանկար են: Այդպիսիները ենթարկվում են բռնության, որովհետև նյութականից բացի ոչինչ չեն տեսնում: Ինտելեկտ չկա: Չեն կարդում»:

Ակնհայտորեն նյութապաշտությունը, հարուստ ամուսին գտնելու կիրքը, նրա հաշվին պարազիտային կյանքով ապրելու մարմաջը, որպես կանոն, ցավալի դեր են խաղում և՛ կանանց, և՛ տղամարդկանց կյանքում: Կանայք պետք է հասկանան, որ ամուսնությունը լուրջ աշխատանք է, և նրանք պետք է ունենան համապատասխան պատրաստվածություն՝ մարդկային, բարոյական, մասնագիտական, որը նրանց հնարավորություն կտա լինել առավել պաշտպանված: Միևնույն ժամանակ տղամարդուն, որպես ընտանիքի «կերակրողի», ներկայացվող չափից դուրս պահանջները՝ նրա մոտ սթրես են առաջացնում և ստեղծում անբարենպաստ միջավայր, որը հետագայում կարող է ագրեսիվ դրսևորումների պատճառ հանդիսանալ: Բռնությունը հաղթահարած և նոր, երջանիկ կյանք սկսած կնոջ մասին որևէ պատմություն գտնելու փորձերը անհաջողության մատնվեցին: Դա կարելի է բացատրել նաև նրանով, որ մենք հետազոտությունը իրականացրել ենք հասարակական կազմակերպությունների տրամադրած տվյալների հիման վրա, որտեղ առավելապես դիմում են ոչ բավարար անհատական ռեսուրսներ, այսինքն՝ հասարակական կապեր, փող, աշխատանք, կրթություն, ունեցող կանայք: Ընտանեկան բռնության ենթարկվող և անհատական ռեսուրսից զրկված կինը

հայտնվում է հուսալքված և անօգնական վիճակում: Նա ընդունում է ընտանեկան բռնության դեմ միայն այն դեպքում, երբ իր կյանքին վտանգ է սպառնում:

Հատված՝ փորձագիտական հարցազրույցից

«Մեզ մոտ մի կին կար, որը Մարտունուց էր: Ամուսինը ծեծում էր նրան, ծնողները չէին օգնում: Նրա ուժեղ կողմն այն էր, որ ավագ դուստրը չափահաս էր և աշխատում էր: Նրանք երկուսն էլ գորգագործներ էին, և միանգամից աշխատանք ստացան Երևանի գործարանում: Նրանք եկել էին, արդեն իմանալով, որ աշխատանք կունենան: Շատ ցածր էին վարձատրվում, և դա չէր բավականացնում բնակարան վարձելու ու ապրելու համար: Նա ապրեց մեր ապաստարանում երեք ամիս, իր աշխատավարձը հավաքեց և կարողացավ մի փոքրիկ կացարան վարձել, ուր մի կերպ ապրում էր երեք երեխաների հետ: Սակայն գոհ էր, որ դուրս էր եկել բռնության փակ շրջանից: Նայած, թե կնոջն ինչ է պետք: Մեկը պատրաստ է ամեն ինչ տանել ֆինանսական աջակցության համար, մյուսը՝ հանուն ազատության՝ համակերպվել աղքատ գոյատևման հետ: Այդ կնոջ դեպքում ամեն ինչ լավ դասավորվեց՝ մի աղջիկն արդեն ամուսնացել էր, մյուսը չափահաս էր և աշխատում էր, փղան ծառայել էր բանակում, և նրանք արդեն կարող էին վարձակալել բնակարան, քանի որ մի քանիսն աշխատում էին: Կանայք, որոնք ունեն փոքրիկ երեխաներ, չունեն իրենց ընտանիքի հետ ուժեղ կապեր, կամ՝ ապահովված և օգնելու պատրաստակամ ընկերներ, ի՞նչ անեն:

- Ինչպիսի՞ լուծում եք Դուք տեսնում:

- Ես, որպես այդ մարդկանց հետ աշխատող անձ, կարող եմ ասել, որ կինն ինքն է ընտրում իր ճակատագիրը՝ ապահովվածությունը բռնության մեջ, կամ՝ ազատությունն աղքատության մեջ»:

Հատված՝ փորձագիտական հարցազրույցից

«Մեկ այլ դեպք էլ կար՝ կինը դասավանդում էր ԲՈՒՀ- ում: Նա կարող էր աշխատանքից գալ և տեսնել, որ ամուսինը հանել վաճառել է տան վարագույրները:

Կինը ենթարկվում էր ուժեղ հոգեբանական բռնության: Նրանք ապրում էին ամուսնու ազգականների տանը, տան վարձ չէին վճարում, ամուսինը նրան տնից վտարում էր, նույնիսկ ձմռանը՝ երեխաների հետ միասին: Եվ նա եկավ մեր ապաստարան: Այստեղ ապրեց երեք տարի: Նա ուժեղ հոգեբանական կապվածություն ուներ ամուսնու հետ, չէր պատկերացնում, թե ինչպե՞ս է ապրելու առանց նրա: Կինը շրջանից էր, նրա մայրը մահացել էր, իսկ հայրը երկրորդ անգամ էր ամուսնացել, և խորթ մայրը չէր ցանկացել մասնակցել նրա կյանքին, ազգականները նրան չէին օգնում և նա, չունենալով տուն, կառչել էր ամուսնուց: Նրա սկեսուրն ապրում էր իր կյանքով, ոչ մի հոգս չէր ցանկանում տանել: Ամուսինը վերադարձավ իր մոր մոտ, իսկ նա հայտնվեց մեր ապաստարանում: Նրա հետ մեր կողմից տարված աշխատանքի հետևանքով, կինը համաձայնեց երեխաներին հանձնել Զեյթունի գիշերօթիկ դպրոց: Մենք միջնորդություն գրեցինք ԲՈՒՀ -ի ռեկտորին և նա ուսանողական հանրակացարանում կնոջը սենյակ հատկացրեց, որի համար նա վճարում էր որպես ուսանող: Արդեն 5 տարի է, ինչ նա հանրակացարանում է ապրում: Ապրում է առանց ամուսնու, մեզ շատ շնորհակալ և երախտապարտ է: Այս պատմության մեջ լավն այն էր, որ կինն ուներ աշխատանք եւ մենք կարողացանք այդ ռեսուրսն ակտիվացնել ու նրան տեղավորել հանրակացարանում»:

Ինչպես տեսնում ենք, այս պատմությունները դժվար է հաջող անվանել: Չենք կարող պնդել, որ նրանց կյանքը դարձավ նախկինից հեշտ, սակայն, տվյալ դեպքում նրանք կատարեցին ընտրություն, որի արդյունքում ստացան արժանապատիվ, բռնությունից ազատ կյանք: Ցավոք, ոչ բոլոր բաժանված կանայք են կարողանում լուծել իրենց ֆինանսական խնդիրները, նրանցից շատերը դառնում են թրաֆիքինգի զոհեր:

Հատված՝ փորձագիտական հարցազրույցից

«Արդեն 8 տարի է, որ աշխատում եմ ընտանեկան բռնության ենթարկվածների, այդ թվում նաև՝ թրաֆիքինգի զոհերի հետ, որոնք մեծ մասամբ ընտանեկան բռնության զոհեր են: Դրանք 30 - 35 տարեկան երիտասարդ կանայք են: Քանի որ նրանք հասարակական աջակցություն և սոցիալական ապահովվածություն չունեն, սրիպված ընդունում են նմանօրինակ առաջարկները: Այսինքն, թրաֆիքինգի երևույթն աճում է ընտանեկան բռնության հիմքի վրա, երբ կանանց թվում է, որ ավելի վատ չի կարող լինել, սակայն ամեն ինչ ավարտվում է առավել ողբերգական պատմություններով»:

Իրոք, եթե անդրադառնանք «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը» գրքույկին, որը տպագրվել է 2010թ., ապա կտեսնենք, որ «դեպքերի մեծամասնությունում ամուսնալուծված կամ ամուրի կանայք են որոշում մեկնել երկրից՝ աշխատանք գտնելու նպատակով[2]», ինչի արդյունքում դառնում են թրաֆիքինգի զոհ:

Շատ հաճախ, կինը ամուսնալուծվելու որոշում չի կայացնում, քանի որ հասկանում է, որ միայնակ, առանց բնակարանի, առանց աշխատանքի /կամ շատ ցածր աշխատավարձով/ նա չի կարող ապահովել երեխաների համար կյանքի բարենպաստ պայմաններ և շարունակում է ապրել բռնության միջավայրում:

Հատվածներ հարցազրույցներից

«Եթե որոշեմ բաժանվել, իմ կյանքը շատ կդժվարանա: Աշխատանք չունեմ: Մեր հայ տղամարդիկ ասում են, որ կինը իրենց ձեռքին է նայում, իսկ ես ուզում եմ իրեն ապացուցել, որ կարող եմ աշխատել գոնե խանութում: Տանը միայն ինքն է գրանցված: Հիվանդագին խանդ ունի: Ինձ թվում է, որ բոլոր տղամարդիկ են այդպիսին, քանի որ 15 տարի ես դա եմ տեսել»:

«Մինչեւ ամուսնալուծվելը, ես երկար եմ մտածել, որովհետև անօգնական էի և չգիտեի՝ ուր գնալ 2 երեխաների հետ: Չէի համարձակվում:

Գիշերվա 10-ին, փոքրիս հետ, նա ինձ դուրս հանեց տանից: Մեծը մնաց տանը, ինձ հետ չուզեց գալ: Մինչ այդ ամուսինս սկսել էր կաշառել՝ երեխային գումար տալ: Հասկանալի է, որ դա անում էր, երեխային իր մոտ պահելու նպատակով, որպեսզի հետագայում ալիմենտ չվճարեր:

2 - «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը» գրքույկ, էջ 43

Բաժանվելուց հետո ապրել եմ վարձով, բայց շատ դժվար: Հետո՝ բարեկամիս, ընկերուհուս տանը: Ես բաժին չունեմ ամուսնուս տանից, որովհետև ես նախ՝ գրանցված չեմ այնտեղ, գյուղում եմ գրանցված: Եթե նույնիսկ գրանցված լինեի, ապա ինձ ոչինչ չէր հասնի, որովհետև դա է մեր այսօրվա օրենքը՝ մարդը 11 տարի ապրում է մի տան մեջ, ու հանկարծ իմանում է, որ ոչինչ չունի այդ տանից: Երբ հարց էի բարձրացնում գրանցման մասին, նա ասում էր, որ դա բավականին մեծ գումարների հետ է կապված, բայց պարզեցի, որ գումարի կարիք չկար: Պարզապես նրա համաձայնությունն էր պետք: Եվ չէր տալիս»:

«Բաժանումից հետո, սկզբում ես ապրում էի ամուսնուս բնակարանում, սակայն, մեկ տարի անց մեզ այնտեղից վռնդեցին: Այդ ժամանակ ես արդեն աշխատում էի: Մինչև հիմա ես վարձով եմ ապրում:

-Իսկ դպրարանի վճռով Ձեզ ինչ-որ բան հատկացրի՞ն:

-Փոքրիկ գումար, որով հնարավոր չէր ոչինչ գնել, քանի որ 90-ականների սկզբներին եկավ նոր իշխանությունը, որին ես ապրում եմ, փոխեց բոլոր օրենքները, սկսեց սեփականաշնորհել այս երկրում ամեն ինչ. իր, իր ընկերների, իր թիմի համար: Նրա օրենքների համաձայն անշարժ գույքի նկատմամբ միայն սեփականատերերն ունեին իրավունքներ: Նրանք թքած ունեին այն մայրերի վրա, որոնք երեխաներ էին մեծացնում»:

Հատված՝ փորձագիտական հարցազրույցից

«Բնակելի տարածության օգտագործման իրավունքի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդ.) օրենքի առջև բոլորը հավասար են և խտրականություն չի դրվում՝ կին ես, թե տղամարդ, ուղղակի մեր հայ հասարակության մեջ հայ տղամարդու սոցիալական դիրքն ավելի բարձր է և կայուն, վաստակողը նա է: Մեր մոտ գրանցված ամուսնալուծությունների ժամանակ, միշտ վտարել են ամուսնալուծվող կնոջը և չեն տրամադրել փոխհատուցում: Մեծ մասամբ, բնակարանները գրանցված են լինում ամուսնու հոր և մոր անունով և բնակարանի սեփականատերերը նրանք են լինում, հետևաբար ամուսնալուծվող կնոջը /հարսին/ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի պահանջներին համապատասխան գրանցված չի լինում, հաշվառումից հանում են և վտարում առանց փոխհատուցման:

Եթե ասենք, որ այս հոդվածը կանանց դեմ է, ճիշտ չի լինի, քանի որ նույն հաջողությամբ կարող է տղամարդը հայտնվել այդ վիճակում կամ տվյալ պարագայում կոտրահարվի սեփականատիրոջ սահմանադրական իրավունքները»:

Այսինքն, ինչքան էլ խոսենք օրենքի առջև հավասարության մասին իրավաբանական պրակտիկան ցույց է տալիս, որ փաստորեն, ավանդական մտածելակերպի արդյունքում, բնակարանի կամ այլ տեսակի գույքերի սեփականատերը, որպես կանոն դառնում է ընտանիքի տղամարդը: Ինչի հետևանքով տղամարդիկ ավելի են հարստանում, իսկ կանայք, աղքատանալով, ավելի մեծ կախման նեջ են ընկնում տղամարդուց, դա լինի հայրը, եղբայրը, ամուսինը: Արդյունքում, հաճախ, ամուսնալուծված և երեխա ունեցող կանայք, զրկվում են բնակարանի իրավունքից, ինչը շատ լուրջ խոչընդոտ է հանդիսանում կնոջ կողմից ապահարզան պահանջելու համար:

Լինում են դեպքեր, երբ ընտանեկան բռնությունը ի հայտ է գալիս բոլորովին այլ բնույթ ունեցող իրավաբանական գործի ընթացքում:

Հատված՝ փորձագիտական հարցազրույցից

«Մի կին հայց էր ներկայացրել դպրարան՝ գյուղապետի, իր նախկին ամուսնու և նրա ծնողների դեմ: Նա պահանջում էր բնակության տարածք և հաշվառում իր 2 երեխաների համար, որոնք չափահաս էին դարձել: Սակայն գործի քննության ընթացքում ընտանեկան բռնության փաստ բացահայտվեց: Պարզվեց, որ տարիներ շարունակ կինը ամենադաժան ծեծի է ենթարկվել ամուսնու և սկեսուրի կողմից: Ծեծել են վառարանի ածուխը ցրելու երկաթով, որից այրուցվել է նրա ամբողջ մարմինն ու դեմքը: Սկզբնական շրջանում նա ուշադրություն չի դիմել, այլ փախել է հարևանի տուն, որտեղից իրեն նորից ծեծելով հետ են բերել: Քրեական գործ է հարուցվել, սակայն, վախենալով ծնողներին վիրավորելուց, նա շարունակել է

այդպես ապրել: Միայն այն ժամանակ, երբ կորցրել են քիթը, նոր միայն որոշել է հեռանալ տանից և փախել է Երևան:

Ես ասացի, որ ինքը պետք է ուսումնասիրություն դիմեր այն ժամանակ, երբ կապտուկները երևում էին: Նա դիմել էր ուշացմամբ, որ կապտուկները արդեն դեղին-կանաչ էին դարձել, նկարել են, բայց գործ չի հարուցվել, բավարարվել են միայն ամուսնուց ստորագրություն վերցնելով, որ նա այլևս կնոջը չանհանգստացնի: Բայց իր դիմումում ներկայացրել էլ միայն երեխաների հաշվառման պահանջը և իր հանդեպ կատարված հանցանքը: Մենք հարցրեցինք՝ ցանկանում է ամուսնու նկատմամբ հարուցել քրեական գործ: Նա հրաժարվեց, ասելով, որ՝ արդեն հոգնել է, իսկ այդ դեպքերից անցել է 8 տարի: Արդեն անիմաստ էր որևէ գործ սկսելը, ամուսինը վաղուց Ռուսաստանում էր, և չէր հետաքրքրվում ոչ իր երեխաներով, ոչ էլ իրենով: Ըստ դատարանի որոշման՝ երեխաները պետք է հաշվառվեին, սակայն նա առարկություն էր ուղարկել իր փաստաբանի միջոցով, ասելով, որ՝ «Ես իր համար ոչ մի բան չեմ անի, իսկ իմ երեխաները, եթե ուզում են, թող գան ու ապրեն»:

Ինչպես տեսնում ենք, ընտանեկան բռնությունը խորապես արմատավորված է մեր հասարակության մեջ: Եվ քանի դեռ մենք ապրում ենք համատարած լռության և «ավանդական ամոթխածության» պայմաններում, դժվար է պատկերացնել այդ երևույթի իրական չափերը:

5. Հետազոտության ամփոփումից բխող հիմնական հետևությունները

Եթե ամփոփենք հետազոտության արդյունքները, ապա կարելի է ասել, որ ընտանեկան բռնությունը բավականին բարդ համադրություն է, որը ներառում է՝ անձի բնավորությունը, նրա սոցիալական սպասումները, հասարակության ընդհանուր սոցիալ–քաղաքական իրավիճակը, բռնացողի անպատժելիությունը և ընտանեկան բռնության մասին օրենքի բացակայությունը:

Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, հասարակությունը, ընդհանուր առմամբ, չի ընդունում ընտանեկան բռնությունը: Սակայն դա բավարար չէ, քանի որ պետք է գոյություն ունենան զոհին պաշտպանող

մեխանիզմներ: Ավելին, ներկայումս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի կիրառման արդյունքում՝ ամուսնալուծված կանայք, իրենց երեխաների հետ, հաճախ զրկվում են բնակելի տարածքից և անօգնական վիճակով հայտնվում փողոցում:

Առավել խոցելի է այն կինը, որն ունի փոքր երեխաներ, չի աշխատում, չունի աջակցող բարեկամական կապեր և ամբողջությամբ կախման մեջ է իր ամուսնուց: Հասկանալի է, որ այդ վիճակում գտնվող կինը չի կարող ամուսնալուծվելու որոշում կայացնել, քանի որ դրանից նրա վիճակն ավելի կծանրանա: Այստեղ շատ կարևոր դեր է խաղում կնոջ անձնական բնութագիրը: Միջանձնային հարաբերություններում շատ բան կախված է կնոջ անձից՝ նրա ինքնագնահատականից, արժեքային կողմնորոշումներից և ընտանեկան պատմությունից, որոնց արդյունքում էլ ձևավորվում է նրա կյանքի «սցենարը»:

Ըստ կատարված հետազոտության՝ ամուսնալուծությունը տեղի է ունենում՝ առաջին հերթին ամուսնու դավաճանության դեպքում, այնուհետև՝ բնավորությունների անհամատեղելիության, ընտանեկան բռնության դեպքում, ամուսինը չի կարողանում ապահովել ընտանիքի բարեկեցությունը, համատեղ երեխա ունենալու անկարողությունը, սեռական անհամապատասխանությունը, տղայի ծնողները հարսին չեն ընդունում, մինչ ամուսնությունը կնոջ կույս չլինելը:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ բռնացողի և զոհի հարաբերություններն այնքան էլ միանշանակ չեն՝ եթե զոհը դիմանում է բռնությանը, ապա վաղ թե ուշ նա գրավում է ագրեսորի դիրք: Տղամարդ-կին, սկեսուր-հարս, ծնողներ-երեխաներ՝ ահա փոխադարձաբար փոխարինվող դերերի անվերջանալի շղթան: Իսկ սա նշանակում է, որ դա ամենևին էլ ուղղակի կանացի խնդիր չէ, այլ հասարակական խնդիր է, որը չկանխելու դեպքում ունի սերնդափոխության միտում: Հենց այս պատճառով, հատկապես կարևոր է, որ դաստիարակության ընթացքում և կրթական համակարգում մեծ ուշադրություն դարձվի մեր հասարակության հիմնարար արժեքներին, ինչպիսիք են՝ հարգանքը մարդու անհատականության և արժանապատվության նկատմամբ:

Հետազոտության արդյունքներից բխող հիմնական առաջարկությունները.

Թեպետ հասարակական կազմակերպությունները մեծ ավանդ են ներդնում տվյալ խնդրի լուծման գործում, միևնույն է, նրանց ջանքերը բավարար չեն: Ընտանեկան բռնության խնդրի լուծման համար

անհարաժեշտ է նաև պետական մոտեցում:

Մասնավորապես՝

1. Ընտանեկան բռնության հետ կապված խնդիրները կարգավորող օրենքի ընդունում:

2. Իրավապահպան մարմինների համար հատուկ ուսուցման ծրագրի կազմակերպում, որը նրանց հնարավորություն կտա ավելի արդյունավետ վարել ընտանեկան բռնության հետ կապված գործերը:

3. Իրավապահպան մարմիններում կին աշխատակիցների քանակի ավելացում, քանի որ բռնության ենթարկված կանանց համար ավելի դյուրին կլինի ներկայացնել իրենց խնդիրները ծառայությունների կին աշխատակիցներին, որի արդյունքում նրանք պաշտպանված կլինեն ցուցմունքներ տալու ընթացքում առաջացող կրկնակի հոգեբանական տրավմայից:

4. Գործող բնակարանային օրենսդրության վերանայում, որը ոտնահարում է ընտանիքի այն անդամների իրավունքները, որոնք սեփականատեր չեն հանդիսանում:

5. Դատավարական համակարգի վերանայում, որը, իր շուկայական մոտեցումներով, զրկում է չքավոր քաղաքացիներին իրենց շահերը պաշտպանելու հնարավորությունից:

6. Քանի որ գենդերային հիմնախնդիրների նկատմամբ հասարակական կարծիքի մակարդակում պեսիմիստական, արհամարհական վերաբերմունք է ձևավորվել, որը փոխանցվում է նաև մամուլով և հեռուստատեսությամբ, ապա անհրաժեշտ է, որ ԲՈՒՀ-երում, մասնավորապես, լրագրողներ պատրաստող բաժիններում, դասավանդվեն մարդու իրավունքներ, գենդերի տեսություն առարկաները, որը հնարավորություն կտա ապագա լրագրողներին, դեռ ուսման տարիներից, պատկերացում ունենալ այդ խնդիրների մասին և հետագայում դրանք գրագետ լուսաբանել:

7. Ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով՝ ՋԱԳՍ-ի շրջանային ծառայություններին կից, ընտանեկան տարաձայնությունների կարգավորման մասնագիտական խմբերի ստեղծում, որոնց մասնագետների (հոգեբաններ, հոգեթերապեվտներ, արտթերապեվտներ, իրավաբաններ) աջակցությամբ կանայք և տղամարդիկ, դեռևս կոնֆլիկտի սկզբնական փուլում, կկարողանան պարզաբանել իրենց հուզող խնդիրները, վերականգնել հոգեֆիզիկական հավասարակշռությունը, գտնել երկուստեք ընդունելի լուծումներ:

6. Հավելվածներ:

Հավելված 1. Հարցաթերթիկ

Հարգելի գործընկեր,

Իրավական մշակութային գենդերային հիմնադրամ «Լիզա»-ն իրականացնում է «Ընտանեկան բռնությունը և ապահարզանը» թեմայով հետազոտություն:

Խնդրում ենք նշել այն պատասխանները, որոնք ճիշտ եք համարում:

1. Ձեր կարծիքով ի՞նչ է ընտանեկան բռնությունը

ա/ երբ ամուսինը սահմանափակում է կնոջ ազատությունը, թույլ չի տալիս նրան աշխատել/սովորել, տնից դուրս գալ առանց թույլտվության
բ/ ծեծում է կնոջը
գ/ _____

2. Ինչպե՞ս եք վերաբերվում ընտանեկան բռնությանը

ա/ համարում եմ թույլատրելի
բ/ համարում եմ անթույլատրելի
գ/ դժվարանում եմ պատասխանել:

3. Ի՞նչ եք կարծում, ո՞րն է ընտանեկան բռնության պատճառը (նշեք մեկը)

ա/ ամուսնու վատ դաստիարակությունը
բ/ ամուսնու հիվանդագին խանդը
գ/ ամուսնու անպատժելիությունը
դ/ ավանդույթը՝ այդպես ընդունված է
ե/ ամուսինը, որը ծեծում է իր կնոջը, ավելի հարգված է իր շրջապատում
զ/ կնոջ պահվածքը
է/ _____

4. Ինչպե՞ս եք վերաբերվում ապահարզանին

ա/ գտնում եմ, որ ապահարզանն անընդունելի է
բ/ դա ամուսինների անձնական գործն է
գ/ երբեմն ապահարզանն անխուսափելի է
դ/ _____

5. Ներքոնշյալ պատճառներից որոնք են բավարար պատճառ հանդիսանում ապահարզանի համար (նշեք երեքը, համարակալելով ըստ կարևորության)

ա/ դավաճանությունը
բ/ ամուսինը չի կարողանում ապահովել ընտանիքի բարեկեցությունը
գ/ սեռական անհամապատասխանությունը
դ/ մինչ ամուսնությունը կնոջ կույս չլինելը
գ/ ամուսինը ծեծում է կնոջը
ե/ տղայի ծնողները հարսին չեն ընդունում
զ/ բնավորությունների անհամատեղելիությունը
է/ համատեղ երեխա ունենալու անկարողությունը
ը/ _____

6. ՈՒնե՞ք արդյոք ծանոթներ, որոնք ամուսնալուծված են

ա/ այո բ/ ոչ

7. Եթե այո, ապա ի՞նչն էր պատճառը (նշեք երեքը, համարակալելով ըստ կարևորության)

ա/ դավաճանությունը
բ/ ամուսինը չի կարողանում ապահովել ընտանիքի բարեկեցությունը
գ/ սեռական անհամապատասխանությունը
դ/ մինչ ամուսնությունը կնոջ կույս չլինելը
գ/ ամուսինը ծեծում է կնոջը
ե/ տղայի ծնողները հարսին չեն ընդունում
զ/ բնավորությունների անհամատեղելիությունը
է/ համատեղ երեխա ունենալու անկարողությունը

ը/ _____

8. Կա՞ն արդյոք Ձեր շրջապատում կանայք, որոնք ենթարկվում են ընտանեկան բռնության.

ա/ այո բ/ ոչ

9. Եթե այո, ապա ինչպե՞ս են նրանք լուծում այդ խնդիրը
ա/ դիմանում են, քանի որ այլ ելք չունեն
բ/ փորձում են բաժանվել
գ/ _____

10. Ենթարկվե՞լ եք/ենթարկվու՞մ եք արդյոք ընտանեկան բռնության

ա/ այո բ/ ոչ

11. Եթե այո, ապա պատրա՞ստ եք այդ մասին ավելի մանրամասն պատմել

ա/ այո բ/ ոչ

12. Ձեր սեռը

ա/ արական բ/ իգական

13. Ձեր տարիքը _____

14. Կրթությունը՝

ա/ միջնակարգ բ/ բարձրագույն գ/_____

15. Մասնագիտությունը՝ _____

16. Ընտանեկան դրությունը՝

ա/ ամուսնացած բ/ միայնակ գ/ բաժանված դ/_____

Հավելված 2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված
Բնակելի տարածության օգտագործման իրավունքը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված

Բնակելի տարածության օգտագործման իրավունքը

1. Անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքը ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքն անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է, որը չի կարող օտարվել, լինել գրավի, վարձակալության կամ անհատույց օգտագործման ինքնուրույն առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել այլ անձի ժառանգաբար կամ իրավահաջորդության կարգով:

Բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձի հետ առանց սեփականատիրոջ համաձայնության կարող են բնակվել նաև իր ընտանիքի անդամները (ամուսինը, անչափահաս երեխաները):

2. Բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից:

3. Բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով:

4. Փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետևյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց և սեփականատերերի ընդհանուր թվի վրա

բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից և ոչ ավելի 9 քառակուսի մետրից:

Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

Եթե անձը մինչեւ 1999 թվականի հունվարի 1-ը սահմանված կարգով հաշվառված-գրանցված է եղել բնակելի տարածությունում և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահը մշտապես կամ առավելապես բնակվել է այդ բնակարանում, ապա մինչեւ 2006 թվականի դեկտեմբերի 31-ը սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմում ներկայացնելու դեպքում փոխհատուցումը կատարվում է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով:

Եթե սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը ներկայացվում է դատարան 2007 թվականի հունվարի 1-ից հետո, ապա սույն կետով սահմանված պաշտպանությունից օգտվում են միայն այն անձինք, որոնց բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցված է սահմանված կարգով: Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանված նորմը կիրառվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կնքված բնակելի տարածության օգտագործման պայմանագրերի նկատմամբ: